ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ՝ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1920 Թ.)

ՀՏԴ 93/94
DOI: 10.56246/18294480-2024.17-20

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող
էլփոստ՝ amirjanyan.hasmik@rambler.ru

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած բազմաթիվ հարցերի շարքում շարունակում էր հրատապ մնալ Հայկական հարցի լուծման ընթացքը: Հարցի պատմության կարևորագույն և վճռորոշ էտապներից է 1920 թվականը, երբ Եվրոպայում մեծ տերությունների կողմից կամակերպվող վեհաժողովներում վճռվում էր Թուրքիայի ճակատագիրը: Այդ գործընթացում շարունակում էր բեղմնավոր գոչծունեություն ծավավալել Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կողմից կյանքի կոչված և դեռևս Եվրոպայում գտնվող Ազգային պատվիրակությունը: ՀՀ կառավարությունն իր հերթին Եվրոպա է ուղարկում պատվիրակություն՝ իր ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, որը միաժամամանակ պետք է զբաղվեր երկու պատվիրակությունների միավորմամբ:

Հոդվածում ներկայացված է Ազգային և ՀՀ կողմից գործուղված պատվիրակությունների գործունեությունը Եվրոպայում: Պատմական պահը թելադրում էր, որ երկու պատվիրակությունները միավորվեն և համատեղ ուժերով ներկայացնեն հայության պահանջները: Այդ ուղղությամբ մեծ գործունեություն է ծավալում նաև Ամենայն հայոց կաթողիկոսը:

Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար առաջնային հիմք են ծառայել իրադարձություններին մասնակից գործիչների աշխատությունները, նամակներն ու գրությունները: Նշված նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությամբ փորձ է արվել վեր հանել երկու պատվիրակությունների համատեղ աշխատանքի ընթացքում ի հայտ եկած տարաձայնությունները և այլ հանգամանքներ, ինչը խանգարեց պատվիրակությունների միավորմանը:

Հոդվածում առաջին անգամ ամփոփ ներկայացված է երկու պատվիրակությունների միջև հակասությունների սկզբնավորումն ու ընթացքը, ինչպես նաև հայոց կաթողիկոսի նպաստը՝ դրանց միջև որոշակի զիջումների ձեռքբերման համար: Կարևոր է այն հանգամանքը, որ այդ պայքարը հայտնի էր եվրոպացի պետական գործիչներին, որոնք իրենց հերթին հորդորում են միավորվել:

Հոդվածի նպատակն է ևս մեկ անգամ վերհանել Հայկական հարցի լուծման ճանապարհին եղած խոչընդոտները, բացահայտել, որ պատվիրակությունների՝ ի դեմս նրանց ղեկավարների միջև ի հայտ եկած տարձայնությունները հետևանք էին և՛ նրանց անձնական հույզերի, և՛ քաղաքական հայացքների տարբերության:

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետություն, պատվիրակություն, Ամենայն հայոց կաթողիկոս, Եվրոպա, Պողոս Նուբար, ներկայացուցիչ, Հայկական հարց:*

1912-1913թթ. Հայկական հարցի վերաբացման և դրա վերաբերյալ քննարկումների ամբողջ ընթացքն ընթացավ Եվրոպա-Ռուսաստան հակամարտություններով, ինչի արդյունքում հարցը ոչ միայն ըստ պատշաճին չներկայացվեց միջազգային բարձր ատյաններում, այլև ձգձգվեց ու բովանդակային փոփոխությունների ենթարկվեց: Իսկ Առաջին համաշխարհայի պատերազմի սկսվելով՝ այն դադարեց հետաքրքրել մեծ տերություններին և առայսօր սպասում է իր լուծմանը, ինչն էլ պայմանավորում է թեմայի արդիականությունը: Հետևաբար հարցի շուրջ ծավալված ամեն մի իրադարձության, այդ թվում դրա լուծմանը խանգարող հանգամանքների նորովի լուսաբանումը ևս մեկ քայլ է ի դերև հանելու և բարձրաձայնելու պատմական ճշմարտությունը:

1918թ. մայիսի 28-ին նոր կազմավորված Հայաստանի առաջին Հանրապետության առաջ ծառացած բազմաթիվ հարցերի շարքում շարունակում էր հրատապ մնալ Հայկական հարցի լուծման ընթացքը: Այդ հարցում շարունակում էր բեղմնավոր գործունեություն ծավալել Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի (1911-1930) կողմից կյանքի կոչված և դեռևս Եվրոպայում գտնվող Պողոս Նուբարի ղեկավարած Ազգային պատվիրակությունը[1]:

Պետական մարմինների կազմավորմանը զուգընթաց ՀՀ կառավարությունն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում արտաքին քաղաքականության բոլոր ուղղությունները: Դեռևս 1918թ. ընթացքում ՀԺԿ վարչության նախագահ Մ. Պապաջանյանը շեշտադրում է, որ կաթողիկոսի «միսիան» հոգևոր բնույթ պետք է ունենա, քանի որ քաղաքական բնույթ կրող պատվիրակությունն այլ է[2]:

---

[1] 1912-1913 թթ. Հայկական հարցի վերարծարծման հարցում առաջ եկած նախադրյալները դրդեցին Գևորգ Ե-ին 1912 թ. նոյեմբերի 10-ի թիվ 1482 կոնդակով խնդրել եգիպտահայ հայտնի բարերար Պողոս Նուբար փաշային (1851-1930) լինել Եվրոպայում իր լիազոր և հայության ներկայացուցիչն առաջիկայում կայանալիք վեհաժողովում (Բալկանյան պատերազմի ավարտից ու խաղաղության դաշինք կնքելուց հետո պատերազմի արդյունքներն ամփոփելու նպատակով Լոնդոնում գումարվելու էր մեծ տերությունների վեհաժողով):

[2] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Մայր Աթոռ Ս. Էմիածինը առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), կազմեց՝**Ս. Բեհբուդյան**, Երևան, 1999, գիրք Ե, վավ. 12, էջ 26:

1919թ. հունվարի 22-ին ՀՀ արտգործնախարար Ալ. Խատիսյանը կաթողիկոսին խնդրում է տեղեկություններ տալ Փարիզի պատվիրակության ծագման և գործունեության վերաբերյալ, ինչպես նաև կազմել և արտգործնախարարությանը ներկայացնել պատվիրակության գրած և ստացած կարևոր թղթերի, վկայագրերի և դիմումների պատճենները[1]: Մյուս կողմից, Ազգային պատվիրակության գործունեության անտեսումը կարող էր հակասությունների տեղիք տալ: ՀՀ կառավարությունն իր հերթին Եվրոպա է ուղարկում կառավարական ներկայացուցչություն Ավետիս Ահարոնյանի ղեկավարությամբ, որը նաև պետք է զբաղվեր երկու պատվիարկությունների միավորման հարցով:

Ազգային միացյալ պատվիրակություն ստեղծելու անհրաժեշտությանը կողմ էր նաև Պողոս Նուբարը, որն այդ մասին դեռևս 1919 թ. օգոստոսի 4-ին գրում է Գևորգ Ե-ին՝շեշտադրելով, որ «...թրքահայ դատէն առած էր իր ծնունդը այն Պատուիրակութիւնը, որ երբեմն կազմուեցաւ Ձերդ վեհափառութեան տնօրէնութեամբ»[2]:

Կաթողիկոսն իր հերթին հասկանում էր, որ պետականության առկայության պայմաններում արտաքին դիվանագիտական տիրույթն ամբողջապես ՀՀ կառավարության մենաշնորհն էր դառնում: 1920թ. հունվարի 9-ին Պողոս Նուբարին հղած նամակով նա անդրադառնում է Ազգային պատվիրակության նոր կազմ հաստատելու հարցին: Գևորգ Ե-ն կարծիք է հայտնում, որ ներկա դժվարին ժամանակահատվածում պետք է լուծվի Հայկական հարցի և միացյալ, անկախ Հայաստանի խնդիրը, իսկ այդ խնդրի բարեհաջող լուծման համար անհրաժեշտ է համաձայնության գալ[3]:

Եվրոպայում երկու պատվիրակությունների առկայությունն աստիճանաբար առաջ է բերում տարաձայնություններ դրանց միջև՝ ի դեմս դրանց ղեկավարների, և դառնում հայության երկփեղկման պատճառ՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանի միջև, ինչը տվյալ պահին խիստ վտանգավոր էր Հայկական հարցի լուծման ճանապարհին:

Մյուս կողմից՝ միջազգային հանդիպումներին, տարբեր համաժողովների քննարկումներին պատվիրակությունները ներկայանում էին առանձին-առանձին, թեև երբեմն համատեղ կարծիքներ էին ներկայացնում: Այսպես, օրինակ, 1920թ. փետրվարի 12-ից մինչև ապրիլի 10-ը Լոնդոնում տեղի էր ունենալու դաշնակից երկրների վարչապետերի և արտաքին գործոց նախարարների կոնֆերանսը, որտեղ քննարկվելու էր Հայաստանի նորաստեղծ պետության ապագան ու հնարավոր սահմանները: Հայաստանի Հանրապետության ու Ազգային պատվիրակությունների ղեկավարները փետրվարի 21-ին, 26-ին ու մարտի 16-ին հրավիրվում են իրենց

---

[1]Պողոս Նուբար փաշա, վավերագրեր, կազմեց՝ **Հովսեփյան Է.,**Ե., 2021, վավ. 64, էջ 101:

[2]Պողոս Նուբար փաշա, վավերագրեր, վավ. 88, էջ 132:

[3]**Նույն տեղում**, վավ. 102, էջ 144:

կարծիքն արտահայտելու[1]: Առաջին հանդիպմանը մասնակցում են Ա. Ահարոնյանը, Պողոս Նուբարն ու Գ. Ղորղանյանը[2]:

Ավետիս Ահարոնյանը 1920թ. մարտի 9-ին Լոնդոնից կաթողիկոսին գրում է, որ ցավոք Ամերիկան հրաժարվեց Հայաստանի մանդատից և ներկայացնում է դրանից բխող նոր պահանջները, որոնք ձևակերպվել էին Պողոս Նուբարի հետ փոխադարձ համերաշխության պայմաններում: Դրանք պետք է ներկայացվեին դեռևս ընթացող համաժողովի քննարկումներին: Այդ առիթով ՀՀ և Պողոս Նուբարի պատվիրակությունների միջև բազմաթիվ հանդիպումներ ու խորհրդակցություններ էին ընթանում: Նրանք երկու անգամ պաշտոնապես ներկայանում են Հայաստանի սահմանները որոշելու համար նշանակված միջազգային հանձնաժողովին: «Այստեղ եւս Նուբար Փաշան եւ ես միաձայն եւ միակամ պաշտպանեցինք վերեւ յիշատակածս պահանջները, մասնաւորապէս ծանրանալով Հայաստանի երկու հատուածների միացման եւ դէպի Սեւ ծովը ելքի վրայ»[3]:

Սակայն պատվիրակությունների ղեկավարների միջև տարաձայնություններ են ծագում հանձնաժողովի մարտի 16-ի նիստին ներկայացվելիք զեկույցի շուրջ[4]: Այդ մասին Ավ. Ահարոնյանը Ալ. Խատիսյանին 1920թ. մարտի 19-ին Լոնդոնից գրում է. «Փաշայի ձգտումն էր որչափ կարելի է ավելի զրկել մեզ մեր անկախությունից և դնել մեզ օտար հովանավորների գործնական իշխանության տակ. նրա կարծիքով՝ որչափ օտարի ազդեցությունը մեր պետության, մեր վարչական գործերի, մեր դատական գործերի, մեր կառավարության գլխին ավելի լինի, այնքան ավելի լավ, քանի որ մենք անընդունակ ենք մեզ կառավարել»[5]: Խնդիրը նրանում էր, որ քննարկվելու էր Հայաստանի սահմանների հարցը, և այդ հարցում Պողոս Նուբարի ներկայացրած ծրագիրն անընդունելի էր Ավ. Ահարոնյանի կողմից, քանի որ դրանում, ըստ նրա, ՀՀ անկախությունը սեղմվում էր, և լայն իրավունքներ էր տրվում մանդատների ներկայացուցիչ բարձր կոմիսարին և վերահսկողություն սահմանելու նպատակով ստեղծվելիք վարչական մարմնին: «Իմ և Փաշայի միջև այս առիթով վեճ եղավ,- գրում է Ավ. Ահարոնյանը, - Փաշան և պատրիարքը (Կ. Պոլսի պատրիարք Զավեն Եղիյանն այդ ժամանակ գտնվում էր Եվրոպայում - Հ. Ա.) պնդում էին, որ մենք անկարող պիտի լինենք մեզ կառավարել, հետևապես օտար ներկայացուցիչների իրավասությունը

---

[1]**Մախմուրյան Գ.,** Ավետիս Ահարոնյանի 1920թ. մարտի 19-ի և 23-ի նամակները Լոնդոնից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 2 (114), էջ 109:

[2]Գաբրիել Ղորղանյան - գեներալ-մայոր, ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական:

[3]Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, վավ. 331, էջ 506:

[4]Գերագույն խորհուրդը առաջարկել էր Ազգերի լիգայի խորհրդին ընդունել Հայաստանի պաշտպանությունը: Ազգերի լիգան հայկական պատվիրակություններից խնդրել էր որոշ տեղեկություններ: Հայկական կողմը ժամանակ էր խնդրել անհրաժեշտ զեկույցը պատրաստելու համար:

[5]**Մախմուրյան Գ.,** նշվ. հոդ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 2 (114), էջ 114

պետքէ շատ լինի»[1]: Ի վերջո, համաձայնության են գալիս. Ահարոնյանը համաձայնում է, որ մանդատը տասը տարվա փոխարեն լինի քսան տարով, իսկ փաշան հրաժարվում է օտարերկրյա խորհրդականներին տրվելիք մի շարք իրավունքներից:

Շուտով կաթողիկոսը, որպես իր ներկայացուցիչ[2], Եվրոպա է ուղարկում Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին[3]: Գլխավոր նպատակն էր երկու պատվիրակությունների՝ ՀՀ կառավարության և Ազգային պատվիրակության, միավորումը և համերաշխության գաղափարի իրագործումը, որի համար եպիսկոպոսը հրաման ուներ կաթողիկոսից և հրահանգ՝ կառավարությունից: Այդ հարցը քննարկվել էր դեռևս 1919թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ կառավարության հերթական նիստի ժամանակ, որտեղ որոշվել էր, որ Փարիզում պատվիրակության նախագահ պետք է ճանաչվեր Պողոս Նուբար Փաշան, իսկ պատվիրակության կազմում կառավարությունը փոքրամասնություն էր կազմելու:

Փարիզում երկու օր մնալով՝ եպիսկոպոսը գնում է Լոնդոն, քանի որ, ինչպես տեսանք, երկու պատվիրակությունների նախագահներ Պողոս Նուբարն ու Ավ. Ահարոնյանն այնտեղ էին գտնվում:

Խորեն Մուրադբեկյանը 1920թ. մարտի 22-ի զեկուցագրով կաթողիկոսին տեղեկացնում է Լոնդոն կատարած ուղևորության և դրա արդյունքների մասին[4]: Լոնդոնում նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում Ավ. Ահարոնյանի և Պողոս Նուբարի հետ, մասնակցում երկու պատվիրակությունների միացյալ ժողովներին, անում հնարավորը՝ հաշտեցնելու նրանց: Եպիսկոպոսը Պողոս Նուբարին է հանձնում Գևորգ Ե-ի գրությունները: Դրանք նպաստում են, որ Պողոս Նուբարը խոստանա զիջումների գնալ, մասնավորապես համաձայնում է կատարել Ահարոնյանի պահանջները՝ միասնական պատվիրակություն կազմելու շուրջ:

Բայց Ավ. Ահարոնյանը վերջին պահին առաջարկեց սպասել ՀՀ կառավարության կարծիքին, որից և ենթադրվում էր, որ կառավարությունը դեմ էր պատվիրակությունների միավորմանը:

Միաժամանակ Պողոս Նուբարը նամակ է ստանում Ալ. Խատիսյանի անունից. վերջինս ևս խոստանում է վերջնական պատասխան հղել՝ ՀՀ արտգործնախարար Հ. Օհանջանյանի հետ խոսելուց հետո: Խորեն Մուրադբեկյանը եզրահանգում է, որ ՀՀ պատվիրակությունը դժգոհ է կառավարության առաջադրած պայմաններից (հավանաբար այն կետից, որ միասնական պատվիրակության նախագահ է լինելու Պողոս Նուբարը և կառավարությունը դրանում փոքրամասնություն է կազմելու), և հրաժար-

---

[1]**Ահարոնյան Ավ.,** Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, էջ 70:

[2]Ի սկզբանե նախատեսված էր, որ եպիսկոպոսը պետք է գնա Ամերիկա, սակայն մինչ Ամերիկա մեկնելը պետք է այցելեր Եվրոպա:

[3]Խորեն արք. Մուրադբեկյան (1873-1938) - Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Ամենայն հայոց կաթողիկոս (1932-1938):

[4]Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, վավ. 333, էջ 507-508:

վում է կատարել դրանք, հետևաբար պատվիրակությունների միավորումը տեղի չի ունենա: Ավ. Ահարոնյանը թեև գտնում էր, որ արևմտահայերի ու արևելահայերի միջև անխուսափելի պառակտումը կանխելու նպատակով անհրաժեշտ է երկու պատվիրակությունները միավորել Պողոս Նուբարի նախագահությամբ, սակայն պայմանով, որ պատվիրակության մեջ Նուբարի կողմնակիցները մեծամասնություն չկազմեն, իսկ կառավարությունը ներկայացուցչական մեծամասնություն ունենա[1]: Փաստորեն Ահարոնյանը, այնուամենայնիվ, պատվիրակության նախագահի առաջ-նայնությունը տալիս էր Պողոս Նուբարին, բայց դա չի գոհացնում վերջինիս, և երկու պատվիրակությունների միջև հակասությունները չեն թուլանում: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ Պողոս Նուբարը չէր վստահում Հայ հեղափոխական դաշնակցու-թյանը և համոզված էր, որ այդ կուսակցությունն իր ծրագրով անկարող է երկիրը վերաշինել:

Ավելի ուշ Ավ. Ահարոնյանը կարծիք է հայտնում, որ պատվիրակություններն այլևս միավորելու անհրաժեշտություն չկա, քանի որ Ազգային պատվիրակությունն իր վնասն արդեն տվել է, և այլևս պառակտման երկյուղ չկա: Մյուս կողմից՝ նա գտնում էր, որ կարիք չկա այլևս ապահովել անգամ կառավարության մեծամասնությունը, քանի որ հարցը լուծման ճանապարհին է: Նա այդ մասին մարտի 23-ին գրում է ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ալ. Խատիսյանին, նշելով, որ պատվիրակու-թյունների միավորման հարցն արդեն ավելորդ և նույնիսկ վնասակար է: Ավելորդ է, քանի որ այդ հարցն արդեն ժամանակավրեպ է, և հայկական խնդիրն արդեն կարելի է համարել լուծված: Վնասակար է, որովհետև պատվիրակություններն այսուհետև զբաղված են լինելու երկրի ներքին կազմակերպչական և մանդատների հետ կապված խնդիրներով: «Այս պարագաներում լավագույն վիճակն այն է, երբ ես ներկայացնում եմ մեր իրավական պետությունը և այս խնդիրները լուծելիս գերակշռող ձայն ունեմ թույլ չտալու համար, որ մեր այնքան թանգ գնով ձեռք բերված ազգային անկախու-թյունը կաշկանդվի օտար կապանքներով՝ շատ երկար ժամանակով: Պողոս փաշայի և յուրայինների ձգտումը իմից և իմ շրջապատից բոլորովին տարբեր է: Նրանք չեն կարողանում ազատվել օտարին ամբողջապես ապավինելու անճարակ ձգտումներից...»[2], - գրում է Ավ. Ահարոնյանը ՀՀ վարչապետ և արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանին 1920թ. մարտի 23-ին:

Փաստորեն, նման կերպ Ավ. Ահարոնյանը փորձում է հասնել Ազգային պատվիարկության ինքնըստինքյան չեզոքացմանը:

Պողոս Նուբարը, ընդհակառակը, գտնում էր, որ պետք էր միավորել պատվիրակությունները մեկ խմբի մեջ՝ իր միակ նախագահությամբ, և թղթերի վրա միայն իր ստորագրությունը դրվի որպես ՀՀ միասնական պատվիրակության

---

[1]Նույն տեղում, վավ. 333, էջ 509-510:

[2]**Մախմուրյան Գ.,** նշվ. աշխ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 2 (114), էջ 119:

նախագահ: Ահարոնյանը հրաժարվում է դա թույլ տալ՝ վախենալով, որ միգուցե փաշան, որ սիրում էր միանձնյա գործել, առանց պատվիրակության կարծիքը հաշվի առնելու թղթեր ուղարկի եվրոպական պետությունների կառավարություններին, որոնք կարող են չհամապատասխանել ՀՀ կառավարության պահանջներին:

Խորեն եպիսկոպոսը կաթողիկոսին կարծիք է հայտնում, որ հակառակ Ավ. Ահարոնյանի պնդման, որ պատվիրակությունների միավորման կարիք այլևս չկա, քանի որ հարցը լուծման ճանապարհին է, միացումն անհրաժեշտ է, քանի որ կուսակցական բնույթ ունեցող խնդիրը փաստացի վերածվել էր պայքարի արևմտահայերի և արևելահայերի միջև: Այդ պայքարը հայտնի էր եվրոպացի պետական գործիչներին, որոնք հորդորում են միավորվել, քանի որ պառակտված վիճակի պատճառով ՀՀ կառավարությունը եվրոպական կառավարություններին վստահություն չի ներշնչում:

Այսպիսով, ստեղծվել էր մի իրավիճակ, երբ պատվիրակությունների միացյալ ժողովները նախագահում էր Պողոս Նուբարը, իսկ փաստաթղթերն ու գրությունները, որ ուղարկվում էր օտար պետություններին, ստորագրում էր մի կողմից Պողոս Նուբարը՝ որպես Ազգային պատվիրակության նախագահ, մյուս կողմից՝ Ավ. Ահարոնյանը՝ որպես Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ: Երկուսն էլ ստորագրում էին նույն տողի վրա՝ աջ և ձախ անկյուններում:

Խ. Մուրադբեկյանը կաթողիկոսին իր կարծիքն է հայտնում Պողոս Նուբարի մասին որպես վատ նախագահի. ոչ ոքի չի թողնում խոսեն, միանձնյա գործելու հակում ունի, սխալներ է թույլ տալիս, բայց չափազանց տարված է հայ ժողովրդին ծառայելու և օգտակար լինելու տենչով: Փառասեր է, և դրանով պետք է բացատրել միակ նախագահ լինելու ցանկությունը[1]:

Պատահական չէ, որ երբեմն Պողոս Նուբարը միանձնյա ստորագրում էր փաստաթղթերի ներքո: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ խաղաղության հանձնաժողովին ներկայացվելիք պաշտոնական նամակը Պողոս Նուբարը կազմել էր սոսկ իր ստորագրությամբ, ինչը վեճի տեղիք է տալիս: Ահարոնյանն իր անհամաձայնությունն է հայտնում, ի վերջո փաստաթղթի ներքո դրվում են երկուսի ստորագրությունը[2]:

Միաժամանակ Խորեն եպիսկոպոսը կաթողիկոսին ներկայացնում է, որ արևմտահայերը, ի դեմս ՀՀ պատվիրակության, արևելահայերի մեջ տեսնում են ձգտում՝ ճնշելու և իշխելու իրենց վրա: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ նրանք արևելահայերին շարունակում են կոչել ռուսահայեր: Խորեն եպիսկոպոսը կաթողիկոսին գրած վերևում նշված նամակում մեջբերում է Զավեն պատրիարքի խոսքերը. «Ես համաձայն չեմ և անթույլատրելի եմ համարում, որ Խատիսեանը վաւերացնէ Փաշային նախագահական պաշտօնի մէջ, որովհետև ազգային պատուի-

[1]Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, վավ. 333, էջ 510:

[2]**Ահարոնյան Ավ.,**նշվ. աշխ., էջ 77:

ռակութիւնը բարձր է և թէ Պոլսի ազգային ժողովն է, որ իրաւունք ունի հարցերը կարգադրելու»[1]:

Խ. Մուրադբեկյանը դժբախտություն է համարում առաջ եկած իրավիճակը, երբ դրված է արևմտահայերի և արևելահայերի խնդիրը, և արևմտահայության որոշ ներկայացուցիչների համար անհանդուրժելի է արևելահայերի, այն է՝ դաշնակցական կուսակցության իշխանությունը: Նա կաթողիկոսին գրում է, որ այժմ, երբ լուծվում է Արևմտյան Հայաստանի և հայրենիքի միավորման, վերաշինման հարցն ու խնդիրները, խիստ անհրաժեշտ է համերաշխություն դրսևորել, բայց, ցավոք, այդ հարցերն այժմ կապվում են պատվիրակության նախագահի աթոռի հետ և ոչ ոք չի ուզում զիջել: Նա գտնում է, որ Հայաստանի բախտն այժմ վճռվում է Անգլիայում, և պահը կարևոր է և նպաստավոր, քանի որ Անգլիան Մարաշի կոտորածներից հետո սկսել էր ակտիվ քայլերի դիմել և հայտարարել էր, որ հայերն իրենց հույսն իրենց վրա պետք է դնեն և գրավեն իրենց երկիրը, իսկ անգլիական «Թայմսն» սկսել էր հոդվածներ տպագրել հօգուտ Հայկական հարցի[2]:

Հայաստանի ներկայացուցիչներից հավաստիանալով՝ որ հայերը կարող են ոտքի հանել 50000 զինվոր, Անգլիան խոստացել էր զենք և հագուստ ուղարկել և թույլատրել գաղութներում կամավորներ հավաքագրել: Ավելին, Համայնքների պալատում Լլոյդ Ջորջը[3] հայտարարել էր, որ հայերը պետք է դուրս գան աղերսողի դերից և իրենք տիրեն իրենց երկրին[4]:

Կաթողիկոսը համաձայն էր, որ տվյալ պահին պետք էր միավորել կառավարության և եկեղեցու ուժերը, քանի որ դա բխում էր պետության շահերից: Նա կողմ էր, որ այդ հարցում առաջնայնությունն անցնի ՀՀ կառավարությանը և այդ մասին քանիցս բացահայտորեն գրել էր Պողոս Նուբարին:

Սակայն կաթողիկոսի ջանքերը ևս արդյունք չեն տալիս, և երկու պատվիրակությունների միջև համաձայնություն չի կայանում: Հիմնական պատճառն այն էր, որ պատվիրակությունները փաստացի վերածվեցին Արևմտյան և Արևելյան Հայաստանի պաշտոնական ներկայացուցչությունների և դարձան կուսակցական պայքարի պատճառ: Կարծում ենք, այդ հարցում իր դերը կատարեց նաև Պողոս Նուբարի և Ավ. Ահարոնյանի քաղաքական հայացքների և դիվանագիտական հարցերի լուծման մոտեցումների տարբերությունը: Պատահական չէ, որ Վահե Արծրունին գրում է, որ եթե համեմատվի երկու պատվիրակությունների 1914-1920թթ. թղթավարությունները Հայաստանի սահմանների վերաբերյալ, ապա «...դուք անկասկած պիտի գտնէք չափազանց մեծ հակադրութիւն մը»[5]:

---

[1]Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, վավ. 333, էջ 511:

[2]**Նույն տեղում,**էջ 512:

[3]Անգլիացի պետական գործիչ, 1916-1922 թվականներին պրեմիեր մինիստր:

[4]Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, վավ. 333, էջ 512:

[5]**Վահէ Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002, էջ 16:

1920թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրի[1] ստորագրմամբ պատվիրակությունները դադարեցնում են իրենց գործունեությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ահարոնյան Ավ.,** Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, Երևանի Համալսարան հրատ., 252 էջ:
2. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Գէորգ Ե Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն հայոց (1847-1930), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ **Սանդրօ Բէհբուդեան**, Երեւան,տպ. Մուղնի, 2005, 712 էջ:
3. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Մայր Աթոռ Ս. Էմիածինը առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), կազմեց՝ **Ս. Բեհբուդյան**, Երևան, 1999, գիրքԵ, 560 էջ:
4. Պողոս Նուբար փաշա, վավերագրեր, կազմեց՝ **Է. Հովսեփյան**, Երևան, հեղինակային հրատարակություն, 2021, 407 էջ:
5. **Վահէ Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002, 456 էջ:
6. **Մախմուրյան Գ.,** ԱվետիսԱ հարոնյանի 1920թ. մարտի 19-ի և 23-ի նամակները Լոնդոնից, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2009, թիվ 2 (114):

THE ISSUE OF UNITING THE TWO ARMENIAN DELEGATIONS IN EUROPE (IN 1920)

AMIRJANYAN HASMIK

PhD in History, Senior Researcher of the Institute of History

National Academy of Sciences of the Republic of Armenia

e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

Among the numerous issues facing the newly formed first Republic of Armenia, the process of resolving the Armenian issue continued to be relevant.

The national delegation of Pogos Nubar, created by Catholicos of All Armenians Gevorg II and still located in Europe, continued its fruitful activities on this issue.

The Armenian government, in its turn, sent a delegation to Europe under the leadership of its representative Avetis Aharonian, who was also supposed to unite the two delegations.

---

[1]Փարիզի մոտակա Սևր քաղաքում 1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց պայմանագիր՝ մի կողմից Դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև:

The presence of two delegations in Europe caused disagreements and then a split of the Armenians between Western and Eastern Armenia, which, at the moment, was extremely dangerous on the way to resolving the Armenian issue.

In addition, at international meetings and discussions during various conferences, delegations appeared separately, although sometimes they expressed joint opinions.

Catholicos of All Armenians Gevorg II sent his representative Bishop Khoren Muradbekyan to Europe, whose main goal was to unite and implement the idea of solidarity between the two delegations – that of the Government of Armenia and the national delegation under the leadership of Pogos Nubar. The Bishop informed the Catholicos about the work carried out in the direction of uniting the delegations. However, attempts to unite the two delegations ended in failure.

The article provides a generalized overview of the beginning and development of the contradictions between the two delegations, as well as the role of the Armenian Catholicos in achieving certain concessions between them. It is important to note that this struggle was known to European statesmen, who in turn called for unity.

Keywords: *the Respublic of Armenia, delegation, Catholicos of All Armenians, Europe, Pogos Nubar, representing the Armenian Issue.*

ПО ВОПРОСУ ОБЪЕДИНЕНИЯ ДВУХ АРМЯНСКИХ ДЕЛЕГАЦИЙ, НАХОДЯЩИХСЯ В ЕВРОПЕ (1920 Г.)

АМИРДЖАНЯН АСМИК
Кандидат исторических наук
Старший научний сотрудник Института истории НАН РА
Электронная почта: amirjanyan.hasmik@rambler.ru

Среди многочисленных проблем, вставших перед новообразованной Первой Республикой Армения, процесс решения Армянского вопроса продолжал оставаться актуальным. Одним из наиболее важных и решающих этапов в истории вопроса являлся 1920 год, когда судьба Турции решалась на ассамблеях, организованных великими державами Европы. В этом процессе продолжала свою плодотворную и активную деятельность Национальная делегация, созданная Католикосом Всех Армян Геворгом Е Суренянцем,которая и до сих пор находится в Европе.

Правительство Армении, в свою очередь, направляет в Европу делегацию под руководством своего представителя Аветиса Агароняна, которая также должна была заняться объединением двух делегаций.

Присутствие двух делегаций в Европе вызывает разногласия и становится причиной раздвоения армянства между Западной и Восточной Арменией, что на тот

момент было крайне опасно на пути решения армянского вопроса. Кроме того, на международных встречах и обсуждениях, на различных конференциях делегации появлялись по отдельности, хотя иногда высказывали совместные мнения.

Католикос Всех Армян ГеворгII направляет в Европу своего представителя епископа Хорена Мурадбекяна, главной целью которого было объединение и реализация идеи солидарности двух делегаций-правительства РА и Национальной делегации Погоса Нубара. Епископ сообщает Католикосу о работе, проводимой в направлении объединения делегаций.

В статье впервые обобщенно представлено начало и ход противоречий между двумя делегациями, а также роль армянского Католикоса в достижении определенных уступок между ними. Важно отметить, что эта борьба была известна европейским государственным деятелям, которые в свою очередь призывали к объединению.

Однако попытки объединить две делегации заканчиваются неудачей.

Ключевые слова: Республика Армения, делегация, Католикос всех армян, Европа, Погос Нубар, представит Армянский вопрос.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 29.09.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 05.10.2024թ.:
Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: